

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. Հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, «Գիտություն» հրատ., 2012, 223 էջ:

Հրապարակի վրա է լեզվաբան Վագգեն Համբարձումյանի գրախոսվող նոր ուսումնասիրությունը, որը վերաբերում է հայերենի բառապաշարի՝ բառաքնական և ստուգաբանական տեսակետից որոշակի կարևորություն ունեցող մի քանի հարցերի: Հեղինակի հետազոտական մտահոգության կիզակետում այս բնագավառում կատարված հին և նոր ուսումնասիրությունների բնութագրման խնդիրներն են, որոնց միջոցով պարզվում են դրանց արդյունքները. պարզվում են պակաս ու թերի կողմերը, սխալները, մյուս կողմից՝ ինչ է կատարվել այդ ուղղությամբ, և ինչպիսի լուծումներ են անհրաժեշտ:

Հնդեվրոպական ընտանիքի լեզուների բառապաշարի ուսումնասիրության հիմքում էական հարցեր են՝ 1) արմատների հնդեվրոպական ծագումը և 2) դրանցով հիմք-լեզվի բառապաշարի՝ բառային կազմի որոշման խնդիրը: Այս հարցերը զբաղեցրել են ոչ միայն հնդեվրոպականներին, այլև հայ լեզվաբաններին (Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան և այլք): Նորօրյա հայ լեզվաբանության մեջ Վ. Համբարձումյանը առաջինն է, որ յուրացնելով և գնահատելով հայերենին վերաբերող հետազոտությունները, շարունակում է պահպանել նրանց ընձեռած ավանդները և նոր խոսք ասել հայերենի արմատաբանության բնագավառում: Շուրջ տասը տարում այդ ուղղությամբ հրապարակումներ է ունեցել<sup>1</sup>, ներկա աշխատանքը առանձին անդրադարձ է նշված թեմային՝ տարբերվելով իր ծավալներով, խորությամբ, հավելումներով և մեկնաբանություններով:

Աշխատանքում քննության են ենթարկվել չորս էական հարցեր՝

1. Հնդեվրոպական ծագման հայերեն արմատների տարբերակային վերականգնման և տիպաբանական հավաստագրման (վերիֆիկացիայի) խնդիրը:

2. Լեզուների նոստրատիկ ուսումնասիրություններում հայերենի վերաբերյալ կատարվածը սահմանափակ է. քիչ թվով փաստերի է վերաբերում, մինչդեռ անհրաժեշտ է ավելի մեծ թվով փաստերի վերլուծություն կատարել, որպեսզի բացահայտվեն հայերենի վաղնջական և հնագույն ժամանակներին առնչվող շատ իրողություններ, որոնց հիման վրա կընդգծվեն հայերենի տեղն ու կարևորությունը հնդեվրոպական լեզուների մեջ:

3. Նախկինում որևէ ձեռնարկում չուներ մի հարց՝ հինանատոլիական (խեթայովական) լեզուներից մեկի, այն է՝ միլերենի և հայերենի միջև կան ծագումնային որոշակի գուցադիպոմներ, որոնք հետագա աշխատանքները շարունակելու և ուսումնասիրության ոլորտն ընդլայնելու դեպքում ավելի հավաստի ու անառարկելի կարող են լինել:

4. Երեմիա Մեղրեցու «Բարզիք հայոց»-ը բանասիրական և հատկապես ստուգաբանական ուսումնասիրությունների է ենթարկվել, սակայն դեռևս կան շատ բառահոդվածներ, որոնք բացահայտված և ստուգաբանված չեն:

Ամբողջ աշխատանքը կառուցված է այս չորս հարցերի բնութագրումների և վերլուծությունների վրա, որոնք հեղեղված են փաստարկումներով, վկայություններով, մեթոմներով և հաստատումներով, լրացումներով ու կրճատումներով, ինչպես նաև ենթադրություններով:

Առաջին հարցին վերաբերող բնութագրություններում ուշադրության են արժանանում հնդեվրոպական (հե.) և ցեղակից լեզուների հնչյունական օրենքներն ու արմատների տարբերակային դրսևորումները:

<sup>1</sup> Տե՛ս «Լեզու և լեզվաբանություն», 2003, -1, էջ 39-43, «Ջահուկյանական ընթերցումներ», 2010, էջ 152-168, «Պատմաբանասիրական հանդես», 2012, -3, էջ 127-147 և այլն:

Այդ հիմունքով բնութագրվում են հետ(ք) «ոտնահետք», տուն, տամ «տալիս եմ», ուտեմ «ուտել», ապտակ «(ձեռքի ափով) հարված», համբոյր, կուռն «մեջք, թիկունք», ճուռն «ագդր, ոտք», յաւան «արտաբերող», սուք «շքեղություն, հանդիսավորություն, ուրախություն», փասքուս «շատախոս» բառերը, որոնց բացատրությունները որքան հետաքրքրական են, նույնքան էլ բարդ պատկեր են ներկայացնում. տրվում են հին և նորագույն մեկնաբանությունները, տարակարծությունները, ապա վերջնական գնահատականները: Այդ ամենը կատարվում է խիստ գիտական մոտեցմամբ, բազմաթիվ հեղինակների, բառարանների, այլնայլ աղբյուրների վկայություններով:

Մեկ օրինակ: «Հայ. համբոյր բառը նախկինում դիտվել է անհայտ ծագման: Ջահուկյանն այն կապում է իրան. ham-bōd ձևի հետ [նշվ. աղբ.]: Աճառյանը հայ. ըմպեմ բայը կապում է ումպ արմատի հետ, այնինչ Ջահուկյանը «ենթադրում է թեմատիկ կրկնավոր ներկայից» առաջացած ... «ումպ-ը կազմվել է հայկական հոդի վրա» [Աճ., 1973, էջ 124, այլև 1977, էջ 599-600, Ջահուկյ., 1987, էջ 187, այլև 2010, էջ 247]» (գրախոսվող աշխ., էջ 13): Վ. Համբարձումյանը ներկայացնում է հետևյալ կարծիքը. «հայ. համբոյր (h-ամբոյր <\*h-ան-բոյր), ըմպեմ (ըմպեմ <\*ըն-պեմ), ինչպես նաև բերան (\*բե-րան) ձևերի բո-//պե-, այլև բե- բաղադրիչները տարբերակային արմատներ են... Դրանք հանդիսանում են հե. \*p<sup>(h)</sup>oH- (վերջինիս կրկնավոր տարբերակ համարվող \*p<sup>(h)</sup>ip<sup>(h)</sup>oH-, կամ էլ ըստ Մայրհոֆերի՝ \*peh3- և այլն) արմատի արտացոլումներ. Հմմտ. հինդկ. pibati «խմում է, ըմպում է» (<\*p<sup>(h)</sup>ibH-), հիբլ. ibid «խմում է, ըմպում է», լատ. bibō (անորոշը՝ bibēre) «խմում եմ, ըմպում եմ», այլև հուն. πῖθι «խմի՛ր», լատ. pōtus «խմիչք» և այլն [Գամքրելիձե, Иванов, 1984, с. 220, 402]» (գրախոսվող աշխ., էջ 13-14): Այս օրինակի բացատրության վկայությամբ նպատակ ունենք ներկայացնելու գրախոսվող գրքի հեղինակի կատարած հետազոտության բնույթը, բնութագրումների ոճն ու եղանակը, վերջապես, գիտականության մակարդակը:

Ասվածի համար ևս մի օրինակ: Նախենք էջ 16-ը: Հայերենում աւետել, առաւուտ (\*առաւաւտ), յաւետ/յաւէտ (յաւիտեան) բառերի շարքում կա նաև յաւան «արտաբերող», որը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» քննական բնագրում նշվում է առանց ձեռագրական տարբերությունների և ծանոթագրությունների: Ամալյանը հետագայում չի անդրադառնում այս բառին: Բառը չկա նաև Աճառյանի «Արմատական բառարանում», ինչպես նաև Ջահուկյանի «Ստուգաբանական բառարանում»: Լ. Հովհաննիսյանի կարծիքով՝ «իրան. hvan «կանչել»-ը թերևս թույլ է տալիս կապ տեսնել յաւանի հետ» [Հովհաննիսյան, 2000, էջ 217]:

Վ. Համբարձումյանը, հենվելով բառի «արտաբերող» իմաստի վրա, որ նշանակում է ձայնական՝ հնչական գործողություն կատարող (nomen agentis), կարծում է, որ յաւան-ի արմատն է աւ, որ սկզբում ունի j հավելված (աճանց) և -ան վերջածանց (աճականական. այս դեպքում՝ դերբայական արժեքով՝ «ձայն հանող՝ կանչող»): Ապա եզրակացնում է. «Ըստ այսմ՝ գործ ունենք բնիկ արմատի հետ. հայ. աւ < հե. \*aus-/\*us- (\*u-es) «լուսավորել, լույս տալ» արմատից [հմմտ. հինդկ. usāh «արշալույս», հուն. (հոն.) ἦώς «(առավոտյան) արշալույս», խեթ. . aus-, us- »տեսնել» և այլն/Гамкрелидзе, Иванов, 1984, с. 223, 229, Ջահուկյան, 1994, №1-2, էջ 57], նշանակում է՝ (բուն իմաստով) առաւաւտ «օրվա սկիզբ», (փոխաբերաբար) աւետել «(բարի) լուր տալ», աւետիք «(բարի) լուր», (բացարձակ իմաստով) յաւէտ «միշտ՝ անսկիզբ և անվերջ» (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 16-17) և այլն: Ամփոփիչ եզրակացություն. «Ուստի գտնում ենք, որ հայ. յաւան բառը «արտաբերող» իմաստով նշանակում է այն անձը, որ «բարի մի բան՝ լույս, լուր է տալիս, ազդարարում, արտաբերում է»: Տողատակում հավելում է. «Այս արմատից է, հավանաբար, նաև հայտնի երգի «Յայուն-յաւուն» անվանումը՝ իբրև «լույսի՝ բարու կանչ, ձայն» (նույն տեղում, էջ 17): Ամենը գիտական է և համոզիչ. սա Համբարձումյանի տարերքն է:

Առաջին հարցին առնչվող՝ հայերենի հնդեվրոպական ծագման իմաստային խումբ կազմող մեկուկես տասնյակից ավելի միավորների բառաքնական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ են կատարվում: Դրանք «կրոն և նախապաշարմունք», «ֆիզիկական աշխարհ» և այլ իմաստներ արտահայտող բառեր են՝ աւատ (այլն հաւատ) «հավատի՝ կրոնի նվիրվածություն, ստուգություն», աւետ (նան աւետ), «(ուրախ) լուր», գո՛գ (նան գոչ-եմ)՝ իբրև հրամայականի ձև («ասա՛»), գոհ (որից՝ գոհանամ) «գոհացած, հաճ և հաւան՝ շնորհակալությամբ հանդերձ», հագագ «շունչ», «ձայն արտաբերող շունչ», հաւան «հավանություն՝ համոզում, հաճություն», հեգ «վանկ», «(գրի) հնչյուն», հեւ «հնալը», «հնք», հեոց» [այլն հեւ-ամ (\*հու-)\* (ծանր) շնչել, շունչ քաշել], հինիւնամ/հինանամ «(արագ-արագ) շունչ առնել՝ քաշել, հեծել, հնալ», հիւ «շունչ» [«հնարավոր է կապել հիւանդ բառի հետ» – Վ. Հ.], հոգ 1) «ցաւ, մտածութիւն, տրտմութիւն, վիշտ», 2) «խնամք, փոյթ, հոգատարութիւն» (Աճ.), հոգի «հոգի» (բուն իմաստով), «անձ, մարդ, շունչ, սատանա, սիրտ, կյանք, կենդանություն» (փոխաբերական իմաստով), հովեմ «հովահարել, զովացնել», հունչք) «ձայն», շոգ «տաքություն, տոթ» (որից՝ շոգի), շունչ «շնչառություն, ոգի, հոգի» (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 21–39):

Հայերեն այս բառերի, արմատների հնդեվրոպական ծագման մեկնաբանությունները զբաղեցնում են գրքի 21–42 էջերը: Բնչպես վերևում ցույց տվեցինք, նույն եղանակով բացահայտվում են արմատներն ու դրանց տարբերակները, ձևական և իմաստային կապերը: Բազմաթիվ ակնարկներ լեզվաբաններից վկայված փաստերով, անհամար հղումներով ճշգրտվում և լրացվում են հետազոտվող կառուցվածքային միավորները, իսկ վերջում պարտադիր կերպով տրվում է հեղինակի կարծիքը, որը մեծ մասամբ որոշակի է, երբեմն՝ թեական (պայմանական):

Օրինակ՝ հիւ արմատը բնութագրելիս նշվում է, որ Աճառյանն այդ արմատն առանձին չունի, և քանի որ այն հնարավոր է

կապել հիւանդ բառի հետ, ուստի այն կարելի է քննարկել այդ համատեքստում: Ըստ այդմ՝ հիւանդ կազմությունը դիտվում է իբրև «անստույգ բառ»: Այս Զահուկյանի մի քանի բացատրություններով ու վկայություններով, Լևիին, Հյուբշմանին, Աճառյանին կատարված հղումներով, նրանց կողմից օգտագործված փաստարկներով Համբարձումյանը համադրում է քննվող հարցը և կարծիքների համեմատական վերլուծությամբ ներկայացնում իր կարծիքը՝ ասելով. «Եթե ընդունենք հայ. հեւ-/հիւ- արմատական տարբերակայնությունը, որը հավանական է ոչ միայն իմաստային, այլև հնչյունական տեսանկյունից, ապա պետք է ծագած համարել հե. pēroto [\*pē(i)-] «ցավեցնել, վնասել», այլև հե. \*H e(i) - «փչել» արմատից (էջ 35): Այստեղ կարծիքը տրամաբանական է և որոշակի:

Մի այլ դեպքում այն կարող է լինել պայմանական կամ հավանական: Օրինակ՝ հայ. հոգ - «ցավ, մտածություն, տրտմություն, վիշտ» և «խնամք, փոյթ, հոգատարություն» արմատը ավելի հավանական է ծագած համարել հե. \*Hju/ont<sup>(h)</sup> - «հով անել, փչել» ձևից, որ ավելի իրական է ոչ միայն հնչյունական առումով, այլև իմաստի տեսակետից (հմտ. հովեմ «հով եմ անում, փչում եմ») (էջ 36):

Երկրորդ հարցի բնութագրումները վերաբերում են հայերենի տվյալների ընդգրկմանը նոստրատիկ լեզուների համեմատական բառարանի մեջ, որից էլ՝ հետագա ուսումնասիրության խնդիրը (էջ 43–78): Նախ հակիրճ անդրադարձ է կատարվում լեզուների ուսումնասիրության նոստրատիկ տեսությանը, որի հիմնադիրը Հ. Պեդերսենն է (1903 թ.), որի հետնորդն է XX դարի 60-ական թվականներին ռուս լեզվաբան Բլիչ-Սվիտիչը: Նա սկզբում ստեղծում է համեմատական քարտարան, ապա երկու հատորով «Ստուգաբանական բառարան»՝ 353 բառահոդվածով: Վ. Համբարձումյանի հաշվումներով դրանից 175-ի դեպքում կարելի է առանձնացնել հայերենի զուգահեռներ: Յ. Պոկոնինն ևս ունեցել է բառարան, որից ոչ անկախ ստեղծված երկու հատորները լույս են տեսել Բլիչ-Սվիտիչի կենդա-

նություն օրոք: Այդ հաստոյնների նյութը ժամանակին քննվել և նկատի է առնվել Գ. Ջահուկյանի կողմից [Ջահուկյան, 1987, էջ 69–72] (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 45): Բլիչ-Սվիտիչի քարտարանի հիման վրա գիտական կոլեկտիվի ջանքերով պատրաստվում է 3-րդ հաստորը, որը պարունակում է 25 բառահոդված: Վ. Համբարձումյանը նշում է, որ այդ 25 բառերից առնվազն 12-ի դեպքում նույնպես հնարավոր է բերել հայերեն զուգահեռներ: «Մույն աշխատանքում անդրադառնում ենք Բլիչ-Սվիտիչի «Մտուգաբանական բառարանի» այն բառահոդվածներին, որոնցում այս կամ այն կերպ տեղ են գտել հայերենի տվյալները՝ իբրև հե. ցեղակցության մի լեզվի համեմատելի միավորներ, ընդ որում ավելացնելով 3-րդ հաստորի նյութերը» (էջ 46),– գրում է Վ. Համբարձումյանը:

Մրան հաջորդում են Բլիչ-Սվիտիչի նոստրատիկ բառարանների 378 բառերից 178-ի բնութագրումները, որոնք ունեն հայերեն զուգահեռներ: Դրանք նույնպես բացատրություններով, մեկնաբանություններով, ճշգրտումներով ու լրացումներով ձուլված են ներկայացնում, որտեղ հեղինակի մոտեցումները դարձյալ մնում են սթափ և ակտիվ վիճակում: Հեղինակը նախ՝ կատարում է արմատական վերլուծություն՝ համեմատության եզր ընդունելով Բլիչ-Սվիտիչի կողմից վերականգնված նոստրատիկ նախաձևը՝ նոստր. նշումով, այնուհետև՝ հղում վերջինիս բառարանին և Գ. Ջահուկյանի աշխատություններին: Այդ 178-ից ցուցադրենք միայն մեկը՝ իբրև նմուշ, մյուսները անհրաժեշտ է կարդալ, որովհետև շատ պարզաբանումներ, հաղորդումներ են պարունակում՝ կապված գրական լեզվի և բարբառների հետ:

Այսպես՝ «21. Նոստ. bura «ծակել, շաղափել». սեւ-քամ. b(w)r «շաղափել, քանդել. (բացված) անցք» - քարթվ. br(u) «պտտել, խաղացնել» (?) - հե. bher - «շաղափել, փորել, քանդել» - ուրալ. pura «գործիք (շաղափելու), շաղափել, ծակել» - դրավ. pōr «անցք, բացվածք» - այլթ. [bura-] պտ-տել, փորել]: Հմմտ. հայ. բիր «փորիչ», բրեմ «քանդել, փորել», բրիչ «թռիչք, թակուջակ», բերան «ուտելու անցք»

[Мллич-Свитиц, 1971, с. 186–187. հմմտ. Ջահուկյան, 1987, էջ 72, այլև 2010, էջ 126, 129]» (էջ 49):

Երրորդ հարցի քննարկումները վերաբերում են հայերենի և միլերենի՝ հին անատոլիական (խեթալուվական) մեռած լեզվի առնչություններին (էջ 79–112): Նշվում է, որ այդ լեզվին վերաբերող աշխատություններից քաղված նյութի սահմաններում հնարավոր է հայերենի և այդ լեզվի միջև մատնանշել ծագումնային առնչությունների վերաբերող որոշ տվյալներ առավելապես հնչյունական կազմի, մասամբ ձևաբանական կառուցվածքի վերաբերյալ, որի համար հղում է կատարվում տասը հեղինակների (էջ 79–80): Բնութագրումները ներառում են հնչյունական և ձևաբանական հետևյալ իրողությունները:

1. Հնչյունական զուգահեռումներ: Առաջին հերթին ուշադրություն են գրավում ձայնավորների (նան՝ ձայնորդների), ապա բաղաձայնների, շատ քիչ դեպքերում մնացածների զուգահեռները: Սկզբից տրվում են միլերենի հնչյունական միավորները, ապա հայերենինը. 1) ձայնավորները միլերենում, 2) ձայնորդները միլերենում, 3) պայթական բաղաձայնները միլերենում, 4) սովորական և քմային շփականները միլերենում:

2. Բառ(աձև)կազմական զուգահեռումներ: Մրանք մեծ մասամբ վերաբերում են անվանական և բայական հիմքերի կազմությանը, մասամբ՝ բառերի կամ արմատների ածանցմանը. 1) գոյականական հիմքով զուգահեռումներ, 2) ուղղական հոլովին վերաբերող զուգահեռումներ, 3) գոյականական և ածականական վերջածանցման հետ կապված զուգահեռումներ, 4) ածականական (դերբայական) զուգահեռումներ:

3. Բառ(արմատ)ային զուգահեռումներ: Այստեղ 18 բառ(արմատ)եր/ներ-ի զուգահեռումներ են բնութագրվում: Մեկ օրինակ՝ «ժա) Միլ. māmre «մեռնել» (?) - հայ. մեռ(-անիմ) «մեռնել. վախճան». հմմտ. խեթ.-լուվ. mer-»մեռնել» (այլև meita «կորսվեց»), հինդկ. mriyáte «մեռնում է», լատ. . morior «մեռնում է» (< հե \*mer- «մահ, մեռնել. վերանալ»), »), [Королев, 1976, с. 85, Гамкрелидзе, Иванов, 1984, с. 475,

Ջահուկյան, 1987, էջ 138, 209, այլև 2010, էջ 523] (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 100): Այս բնույթի են մյուս բառերն ու արմատները, և հարկ չկա անդրադառնալ դրանց: Պետք է կարդալ ու կարդալ:

Չորրորդ հարցի շարադրանքը վերնագրված է՝ «Երեսիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» «կասկածելի և անստույգ» բառերի մասին, որն ամենածավալունն է (էջ 113–168) և ամենաուշագրավն ու հեղինակի հետազոտությունների ամենաարգասավոր բաժինը: Նրանում սովորականից ավելի մեծ ջանք ու եռանդով կատարվում է ահռելի յուրահատուկ աշխատանք, որի բովանդակությունը երկու տեսակ է:

ա) Բնութագրվում են «Բառգիրք հայոցին» վերաբերող ուսումնասիրությունները, որոնցից յուրաքանչյուրը առանձնանում է քննված նյութի խորությամբ և ընթերցողին ներկայանում գիտական հետազոտության օրինակելիությամբ: Այդ հեղինակներն են՝ Գ. Ղափանցյան, Շ. Ամալյան, Է. Աղայան, Գ. Ջահուկյան և ուրիշներ: Աճառյանի մասին նշվում է, որ թեև օգտվել է բառարանից, բառերն օգտագործել իր բառարանում, սակայն «կասկածելի և անստույգ» է համարել այդ բառերը: Գ. Ջահուկյանը բազմաթիվ ուսումնասիրություններում անդրադարձել է այդ բառարանի բառահողվածներին, դրանք բնութագրել, ճշգրտել և օգտագործել: Այդպես էլ՝ մյուս հեղինակները (էջ 113–118):

բ) Տրվում են Վ. Համբարձումյանի կողմից նոր լուսաբանված 40 բառերը:

Վ. Համբարձումյանի մեկնաբանությունները և նոր լուսաբանումները դյուրին ու հեշտ եղանակով չեն ընթանում: Նա վկայում է նույն բառի վերաբերյալ տարբեր հեղինակների և տարբեր ժամանակներում եղած բնութագրումները, զուգադրում-համեմատում է դրանք, հայտնում սեփական կարծիքը ու հասնում վերջնական եզրակացության: Երբեմն մի բառի բացատրության առիթով մի քանի կետերով բացատրվում կամ վկայվում են բազմաթիվ այլ բառեր կամ բառախմբեր: Անհամար բառեր, արմատներ, բառի կառուցվածքային այլ միավորներ շարժման մեջ են դրվում հնդեվրոպական նախալեզվից և

այդ ընտանիքի ցեղակից լեզուներից (դրանց քանակն անցնում է հարյուրներից ու հազարներից): Այստեղ նույնպես հայերենի վկայություններն ընտրվում են գրական լեզվից և բարբառներից:

Նոր լուսաբանված 40 բառերն են՝ աղանդումն «խելագարումն», աղիփատոս «հոգաբարձու», աղտամուղտ կամ աղջամուղջ, աղցաման «ապարանջան, աղբաման», աճապել/աճապարել «յառաջել, կամ հասանել», ամասայ «ի ձեռն ալֆայ՝ հօր կամ քաջ», անարգատիպ «անձև», անարդակ «գառ ի վեր, անգանակ», անդուքն «թարգմանի ամնարտալանութիւնք», անտար «ապրայ, կշորոդ», բուղաբար «մատանի, կնքոց», գաղգաղ «անիւ, շողովումն, յայտնութիւն», դասօն «խոսել», դնոց կամ պատգարակ «մահիճ, դափոխ», եկթափիստել «հիանալ, տխրել, մտայոյգ, զարհուրել», եկիտ «ծածուկ», եմման/եմմանու «եղեալ յումեքէ», եսեն «դարան, լրութիւն, աղբիւր», եստորոզի «զնմանէ», ետրաղիճ «անառակ. անբարո (աղջիկ)», ընթարց «նախդիր, որ զսեռականն պահանջէ. առանց», թեսաղ/թեսել «ժողով, ժողովել», ի մակագոյն «երկրագոյն», իրայոն «տեսիլ», լեղեալ «լքյալ, ձանձրացյալ», իւել «հեշտ», իշել «դադարել», կալոն «սեղեխ, հոմանի», կոնդ «զերեզման», հաս «տիք», յաւան «արտաբերող», նիմիք «ուսման», ոզորիլ «կռվել, մարտնչել, դիմակայել», ողայ «ողբալի ձայն», ուքամ «ընթացք», սուքար «հավոնոց», փասքուս «շատախոս», փոփոզել (<փո-փոզել) «հոգի՝ շունչ տալ» և այլն:

Եթե այս բառերից մեկնումեկը ներկայացնենք բացատրություններով հանդերձ, պարզ կլինի, թե ինչպիսի տքնաջան գիտական աշխատանք է կատարված: Ընտրենք հակիրճ բնութագրումով եսեն բառը: «20. Եսեն «դարան, լրութիւն, աղբիւր» [«Բառգիրք հայոց», 1975, էջ 91]: Աճառյանը գրում է. «Եսեն «դարան կամ լրութիւն կամ աղբիւր», ունի Բառ. երեւ. էջ 89» [Աճառյան, 1971, էջ 26]: Գրեթե նույնը հանդիպում ենք Ջահուկյանի բառարանում. «Անստույգ բառ: Ծագումն անհայտ է» [Ջահուկյան, 2010, էջ 218] (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 152–153): Վ. Համբարձումյանն անցնում է մեկնաբանության. «Ելնե-

լով բառահողվածի մեջ «աղբյուր» բացատրությունից, որին կից նշվում են նաև «դարան, լռություն», կարելի է ենթադրել, թե վերջիններս աղբյուրի «թաքուն, դեռ չբխած վիճակ» են նշանակում: Եվ եթե այդպես ենթադրելը ընդունելի է, ապա նաև հավանական ենք համարում եսեն բառի (նախնական ձևը՝ \*էքսեն?) փոխառյալ լինելը՝ հուն. *ἔξην* (սահմ. եղ. անցյ. անկատ. եզ. 3-րդ դ. *ἔξιμο* բայի) «բխում է, հորդում է, դուրս է գալիս՝ տալիս». հմմտ. նաև հուն. *ἔξιμο* (*ἔξιμο*) (սահմ. եղ. ապարանի՝ *ἔξιμο*) «դուրս գալ, տարածվել, ձգվել», «մոտ գալ, մոտենալ», «տարածվել, ցրվել», «հորդել, լցվել, թափվել» և այլն [*Дворецкий*, 1958, с. 570] (էջ 153. ընդգծումները – Է. Մ.) (տե՛ս գրախոսվող աշխ., էջ 153):

Ընթերցողին ենք թողնում կարդալ 39 բառերի մեկնաբանությունները:

Ուշագրավ է, գիտական, յուրահատուկ և ճոխ սույն աշխատանքի կառուցվածքը: Այն ունի ներածություն, չորս հարցադրումների բնութագրումներ, որոնցից յուրաքանչյուրը մեկ գլխի արժեք ունի: Առանձին և ծավալուն տրված է ըմպել բայի ստուգաբանությունը (էջ 103–112): Կան ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ, որոնք հույժ կարևոր են օտար(ոչ միայն օտար) ընթերցողի համար: Համառոտագրությունները բովանդակայից են՝ 1. գիտական հանդեսներ, գրքեր, 2. լեզուներ

և բարբառներ, 3. տերմիններ և տերմինալին անվանումներ, 4. այլ կարգի: Օգտագործված գրականությունը հարուստ է և բազմալեզու (էջ 189–203), բաղկացած է երկու բաժնից՝ 1. սկզբնաղբյուրներ (էջ 189–192), 2. ուսումնասիրություններ (էջ 192–203): Աշխատանքն ունի նաև առարկայական ցանկեր (էջ 205–222)՝ բաղկացած երկու բաժնից՝ 1. հայերեն բառեր և բառաձևեր (էջ 205–219, շուրջ 1000 բառ), 2. անվանացանկ (էջ 220–222): Միով բանիվ՝ պակաս տեղ չունի:

Ամփոփում: Գրախոսվող սույն աշխատանքը համեմատական լեզվաբանության բնագավառի ուսումնասիրություններում արժանի տեղ ունի: Հեղինակին հաջողվել է ներկայացնել ու գնահատել հայերենի արմատաբանության, արմատի տարբերակայնության ասպարեզի ուսումնասիրությունները և գիտակցելով նորագույն հետազոտություններում առաջադրվող խնդիրները՝ աճառյանական, ջահուկյանական և այլ մեծերի ոգով նվիրվել է բարդ ու կնճռոտ հարցերի լուծմանը:

Վ. Համբարձումյանն այս հետազոտությամբ հնդեվրոպական ցեղակից լեզուների շարքում նոր ու նպաստավոր լիցք է հաղորդում նախալեզվի արմատի տարբերակայնության չլուծված խնդիրները բացահայտելուն: Գիրքն օգտակար է հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրողների, բուհական դասընթացների համար:

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՅԱՆ